

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ
29.12.2011թ. թիվ 1/1486Ա ՈՐՈՇՈՒՄ

Ա/Ձ ԱՐԹՈՒՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 708) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

«Արթուր Դանիելյան» Ա/Ձ (լիցենզիա 708) փոխանակման կետի կողմից սույն որոշմամբ նկարագրված խախտումը թույլ տալու համար փոխանակման կետի նկատմամբ կիրառել նախազգուշացում՝ ապագայում նման խախտում թույլ չտալու հանձնարարականով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում փոխանակման կետ մուտքագրվելու կամ փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԱՐԹՈՒՐ ԶՎԱԿՅԱՆ

Ամփոփ նյութ

Ա/Ձ ԱՐԹՈՒՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 708) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 29.12.2011թ. թիվ 1/1486Ա որոշմամբ «Արթուր Դանիելյան» Ա/Ձ (լիցենզիա 708) փոխանակման կետի կողմից արժութային օրենսդրության պահանջները խախտելու համար՝ փոխանակման կետի նկատմամբ կիրառվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտում թույլ չտալու հանձնարարականով:
